ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՊ-ՊԸԾՁԲ-17/10-128-2017

ք. Երևան «30» 03 2017 թ.

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Վահե Էլոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Իմպերիում» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Դ. Հովհաննիսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից,միասին անվանվելով նաև Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» 2017 թվականի մրցույթի անցկացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Եթե սույն պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով[1]:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 13 700 000(տասներեք միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2017թ.:

---

[1] *Կիրառվում է, եթե կնքվում է շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:*

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

---

[2] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում[3]:

7.5 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[4]:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

---

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[4] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 , N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	« Իմպերիում » ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան 9	ք.Երևան, ԱՐԱԲԿԻՐ Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ 112 7
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«Ինեկոբանկ»ՓԲԸ
Հ/Հ 900011059095	Հ/Հ 2050622060861001
ՀՎՀՀ-02586282	ՀՎՀՀ 00135548
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝ Դ.Հովհաննիսյան
_____ Վ. Էլոյան	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
2017թ. Տարվեր 30-ին կնքված
ԿՊ-ՊՆԾՁԲ-17/10-128-2017 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար *«Լավագույն մարզական ընտանիք»* 2017 թվականի մրցույթի անցկացման ծառայությունների ձեռքբերում
Միջոցառման նպատակը և խնդիրները. 1. Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի *(այսուհետ՝ Մրցույթ)* նպատակն է՝ անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, բնակչության առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում: 2. Մրցույթի խնդիրներն են՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ֆիզկուլտուրայի և սպորտի ուղղությամբ կատարվող աշխատանքների խթանում, բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում, բնակչության ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով ընտանեկան կապերի ամրապնդում և առողջ կենսակերպի գաղափարների արմատավորում, հաշմանդամային սպորտի զարգացման խթանում, սոցիալական հավասարության խթանում, հաշմանդամների շրջանում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում: 3. Մրցույթն անցկացվելու է տվյալ օրացուցային տարվա հունիս-հուլիս ամիսներին՝ 3 փուլով. 1-ին և 2-րդ փուլերը՝ նախնական, 3-րդ փուլը՝ եզրափակիչ: 1) 1-ին փուլն անցկացվելու է հունիսի 1-ից մինչև հունիսի 15-ն ընկած ժամանակահատվածում՝ Հայաստանի Հանրապետության 42 քաղաքային և գյուղական համայնքներում, Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում՝ Ստեփանակերտ քաղաքում, ԼՂՀ 6 շրջաններում *(1-ին փուլի մրցումների անցկացման համար տրվում է 3 օր):* 2) 2-րդ փուլն անցկացվելու է հունիսի 18-ից մինչև հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում՝ Հայաստանի Հանրապետության մարզերում, Երևան քաղաքում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում՝ համաձայն ներկայացված ժամանակացույցի՝ ա. Կոտայքի մարզ – հունիսի 18-ից մինչև 20-ը (ք. Չարենցավան), բ. Գեղարքունիքի մարզ – հունիսի 19-ից մինչև 21-ը (ք. Գավառ), գ. Տավուշի մարզ – հունիսի 20-ից մինչև 22-ը (ք. Իջևան), դ. Լոռու մարզ – հունիսի 21-ից մինչև 23-ը (ք. Վանաձոր), ե. Շիրակի մարզ – հունիսի 22-ից մինչև 24-ը (ք. Գյումրի), զ. Արագածոտնի մարզ – հունիսի 23-ից մինչև 25-ը (ք. Աշտարակ), է. Արմավիրի մարզ–հունիսի 24-ից մինչև 26-ը (ք. Արմավիր), ը. Արարատի մարզ – հունիսի 25-ից մինչև 27-ը (ք. Արտաշատ), թ. Վայոց ձորի մարզ - հունիսի 26-ից մինչև 28-ը (ք. Եղեգնաձոր), ժ. Սյունիքի մարզ – հունիսի 27-ից մինչև 29-ը (ք. Կապան), ժա. ք. Երևան - հունիսի 27-ից հուլիսի 1-ը, ժբ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն - հունիսի 29-ից մինչև հուլիսի 1-ը

(ք. Ստեփանակերտ):

3) 3-րդ՝ եզրափակիչ փուլի մրցումներն անցկացվելու են 6 օրում՝ Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում: Եզրափակիչ փուլի անցկացման ստույգ ժամկետի մասին Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության *(այսուհետ՝ Նախարարություն)* կողմից կտեղեկացվի լրացուցիչ:

4. Մրցույթի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Նախարարությունը:

5. Մրցույթի 1-ին և 2-րդ փուլերի կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության համապատասխան վարչությունները և բաժինները: Եզրափակիչ փուլի մրցումների անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում է Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից հաստատված մրցավարական հանձնաժողովը:

Բոլոր փուլերում մարզական միջոցառման ծրագիրն իր մեջ ներառում են
Վարժություն N 1 Խաղային փոխանցավազք՝ 30 մ
Վարժություն N 2 Վարժություն բասկետբոլի գնդակով
Վարժություն N3 Պարանի ձգում
ՎարժությունN4 Խաղային փոխանցավազք՝ թենիսի գնդակով
Վարժություն N 5 Հեռացատկ (տեղից)
Վարժություն N6 Խաղային փոխանցավազք 80 մ (30մ+30մ+20մ)

Որոնց համար անհրաժեշտ մարզագույքն է՝

- Դարաս : Պատրաստված է խտացված բուսական մանրաթելերից կամ խտացված բամբակից, թիրախը բաժանված է հատվածների, որոնց վրա գրանցված են 1-ից 20 թվերը, նետի ծայրամասը պատրաստված է մետաղե ասեղից, իրանը՝ պլաստմասսայից:
- Մարմնամարզական փուչիկ (ցատկերի համար) (65 սմ տրամագծով):
- *Վայրկյանաչափ էլեկտրոնային* պլաստմասսե պատյանով:
- *Օդաճնշիչ հրացանի փամփուշտ* (շեշմա):
- *Բասկետբոլի գնդակ*՝ կաշվե հումքից, N 5 կամ

N 6:

- *Բասկետբոլի գնդակ*՝ կաշվե հումքից, N 5 կամ

N 6:

- *Թենիսի գնդակ* (Babolan կամ համարժեքը)՝ դեղին գույնի:
- *Օդամղիչ հրացանի փամփուշտ (շեշմա):*

- Բաթմինթոն - նյութը՝ գրաֆիտ-կարբոն, ցանցի գործվածքը՝ սինթետիկ թելից:
- Օդաճնշիչ հրացան (վարձակալում):
- Ռուլետկա (50 կամ 100-մետրանոց):
- Տրանսպորտային միջոցներ 1-ին և 2-րդ փուլերի մարզագույքը տեղափոխելու համար՝ Երևան-Ստեփանակերտ–ՀՀմարզկենտրոններ:

3-րդ եզրափակիչ փուլի մարզագույքը և նվերները՝ Երևան-Ծաղկաձոր-Երևան): Մեքենաների քանակը ըստ անհրաժեշտության:

<u>Նախապատրաստական աշխատանքների համար նախատեսված (22-31.05.2017 թ.)՝</u>

- Գովազդային տեսահոլովակի պատրաստում հեռուստատեսությամբ հեռարձակելու համար:

40 վայրկյան տևողությամբ

- Գովազդային տեսահոլովակի հեռարձակում, մայիսի 22-ից մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում:

30 բոպե տևողությամբ

- Գովազդային պաստառ՝ թղթե, գունավոր ձևավորված, «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի պատկերանշանը (լոգո) կենտրոնում, վերին մասում մեծ տառերով գրված «Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար»: Չափը՝ 60 սմ x 40 սմ, կավճապատ, քաշը՝ 300 գր:

61 համայնք = 1000 հատ

<u>1-ին փուլի համար նախատեսված (01-15.06.2017 թ.)՝</u>

- *Մարմնամարզական փուչիկ* (ցատկերի համար) (65 սմ տրամագծով): 2 հատ x 61 համայնք = 122 հատ
- *Դարբաս:* Պատրաստված է խտացված բուսական մազաթելերից կամ խտացված բամբակից, թիրախը բաժանված է հատվածների, որոնց վրա գրանցված են 1-ից 20 թվերը, նետի ծայրամասը պատրաստված է մետաղե ասեղից, իրանը՝ պլաստմասսայից:

1 հատ x 61 համայնք = 61 հատ

- *Վայրկյանաչափ էլեկտրոնային* պլաստմասսե պատյանով: *1 հատ x 61 = 61 հատ*
- *Օդաձնշիչ հրացանի փամփուշտ* (շեշմա):

500 հատ x 61 համայնք = 30500 հատ

- *Հավաստագիր:* Չափը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ: Տեքստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ՝

12հատ x 61 համայնք =732 հատ

<u>*2-րդ փուլի համար նախատեսված (18.06 - 01.07.2017 թ.)՝*</u>

- *Բասկետբոլի գնդակ՝* կաշվե հումքից, N 5 կամ N 6:

2 հատ x 12 համայնք = 24 հատ

- *Թենիսի գնդակ* (Babolan կամ համարժեքը)՝ դեղին գույնի: 15 հատ x 12 համայնք = 180 հատ
- *Օդամղիչ հրացանի փամփուշտ (շեշմա):*

5000 հատ

- *Դարբաս:* Պատրաստված է խտացված բուսական մազաթելերից կամ խտացված բամբակից, թիրախը բաժանված է հատվածների, որոնց վրա գրանցված են 1-ից 20 թվերը, նետի ծայրամասը պատրաստված է մետաղե ասեղից, իրանը՝ պլաստմասսայից:

24 հատ

- *Վայրկյանաչափ էլեկտրոնային* պլաստմասսե պատյանով:

2 հատ x 12 = 24 հատ

- *Հավաստագիր* (պատվոգիր). չափը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ: Տեքստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ՝

12 հատ x 12 համայնք = 144 հատ

- *Մարմնամարզական փուչիկ* (ցատկերի համար) (65 սմ տրամագծով):

1 հատ x 12 համայնք = 12 հատ

3-րդ փուլ *(եզրափակիչ) փուլի համար նախատեսված*

ք. Ծաղկաձոր

- *Բասկետբոլի գնդակ* ՝ կաշվե հումքից, N 5 կամ N 6:

6 հատ

- *Թենիսի գնդակ* (Babolan կամ համարժեքը)՝ դեղին գույնի:

50 հատ

- *Հավաստագիր* (պատվոգիր). չափը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ: Տեքստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ՝

36 հատ

- *Դարբաս* ՝ պատրաստված է խտացված բուսական մազաթելերից կամ խտացված բամբակից, թիրախը բաժանված է հատվածների, որոնց վրա գրանցված են 1-ից 20 թվերը, նետի ծայրամասը պատրաստված է մետաղե ասեղից, իրանը՝ պլաստմասսայից:

4 հատ

- ՀՀ Նախագահի վկայագիր՝ չափը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ: Տեքստը համաձայնեցնել ՀՀ Նախագահի աշխատակազմի հետ՝

15 հատ

- *Հուշամեդալ* պատվավոր հյուրերին, չափը՝ 5 սմ տրամագծով x 0,3 սմ հաստությամբ, մետաղե ձուլվածք, հուշամեդալի տուփը կտորապատված:

20 հատ

- *Մեդալներ.* չափը՝ 5 սմ տրամագծով x 0,3 սմ հաստությամբ, մետաղե ձուլվածք, եռագույն ժապավենով՝ 0.80 սմ երկարությամբ, սինթետիկ հումքից:

45 հատ

- Մարզահագուստ մասնակից բոլոր երեխաների համար՝ կիսասինթետիկ հումքից, վերնազգեստը կարմիր, եզրագծված սև և սպիտակ գծերով, տաբատը սև, կրծքավանդակի վերին ձախ մասում «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի պատկերանշանը, ասեղնագործված (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով):

167 հատ

- Մրցավարների համար բամբակյա կտորից ամառային շապիկ և գլխարկ, գույնը՝ սպիտակ, «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի պատկերանշանով (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով):

44 հատ

- Նվերներ մասնակից երեխաների համար (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով):

- Նվերներ մասնակից երեխաներո՝ բաթմինթոն - նյութը՝ գրաֆիտ-կարբոն, ցանցի գործվածքը՝ սինթետիկ թելից: 167 զույգ
- ՀՀ եռագույն դրոշ (0,90 մ x 1,5 մ)՝ անջրթափանց կտորից:

30 հատ

- ՀՀ եռագույն դրոշ (3 մ x 12 մ)՝ անջրթափանց կտորից, եզրերը կարված՝ միջով ամոր հաստ թել անցկացրած, դրոշի վերևի և ներքևի հատվածները կարված, 10 սմ լայնությամբ, որպեսզի արանքով մետաղական խողովակ անցնի: Վերջնական տեսքը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ՝

2 հատ

- Մետաղական վրանի առաստաղի սպիտակ պաստառ,մետաղական օղակներով, օղակների հեռավորությունը մեկը մյուսից 15 սմ, պաստառի եզրերը եռակի ծալված, երկարությունը 12 մետր x լայնություն 3 մետր:

1 հատ

- Գավաթ 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրված պատվիրակությունների համար՝ 70 սմ, 65 սմ և 55 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով:

3 հատ

- Օդաճնշիչ հրացան (վարձակալում): 4 հատ
- Օդաճնշիչ հրացանի փամփուշտ (շեշմա):

1000 հատ

- «ՀԱՂԹԱՆԱԿ» բառի տառերի տպագրում (30 սմ x 20 սմ չափսի, բաների վրա, կարմիր գույնով, տառերի չափը՝ 22 սմ):

4 լրակազմ

- Ռուլետկա (50 կամ 100-մետրանոց): 2 հատ
- Ձայնային տեխնիկայի ապահովում՝ (բարձրախոս, պլաստմասսե կորպուսով, 45 Վատտ հզորությամբ բարձրախոս 7 կՎտ հզորությամբ, 2 բարձրախոս առանց լարի, 1-ը լարով, միկշերային վահանակ:

5 օր

- Շտապ բուժօգնության ծառայության ապահովում մասնակից ընտանիքների անդամների և մրցավարների համար:

6 օր

- Եզրափակիչ ճաշկերույթի կազմակերպում Ծաղկաձոր քաղաքում (մարզաբազայում կամ այլ նմանատիպ մարզահամալիրում)՝ մասնակից ընտանիքների և հրավիրված հյուրերի մասնակցությամբ, նվագախմբի ապահովում:

550 մարդու համար

- Մարզադաշտի ապահովում Ծաղկաձորում (մարզաբազայում կամ այլ նմանատիպ մարզադաշտում) (վազքուղիները նշագծված, խաղադաշտի խոտը հնձված, հարակից տարածքը բարեկարգված, դրոշակներով և պաստառներով զարդարված):

6 օր

- Պատվիրատուի կողմից տրամադրված վրանի կոնստրուկցիայի քանդում և հավաքում՝ մոնտաժվող և դեմոնտաժվող տարբերակով, երկարությունը՝ 12մ, լայնությունը՝ 3մ, բարձրությունը՝ 3 մ:

1 լրակազմ

Մրցավարական հանձնաժողովի և մրցավարների աշխատանքները ապահովելու համար անհրաժեշտ գրենական պիտույքներ՝

- կաշվե թղթապանակ փափուկ կազմով և ՀՀ զինանշանով, 35 սմ x 23 սմ չափսի: 15 հատ
- թղթե արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210 x 297 մմ) ձևաչափի:

20 հատ

- ֆայլ (թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորություն):

1 տուփ՝ 100 հատ

- ծրար A5 ձևաչափի: Ծրարներ չթափանցող, եռանկյունաչափ փակվող, խիտ թղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար՝ սահմանված չափի և ձևի: 350 հատ
- կպչուն ժապավեն (սկոչ): 10 հատ
- թղթե կպչուն ժապավեն 48 մմ x 100 մ չափսի, տնտեսական, մեծ, գլանափաթեթված ժապավեն սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018 - 0,030 մմ կամ 0,030 - 0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ: 10 հատ
- հաշվիչ (կալկուլյատոր) «CITIZEN» կամ համարժեքը: 2 հատ
- թուղթ A4 ֆորմատի1 (21 x 29.7): A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ², (210 x 297 մմ): 5 տուփ
- թղթապանակ/ռեգիստրատոր՝ 2 օղակով, պլաստիկ, լայնությունը՝ 80 մմ, A4 չափսի: 10 հատ
- գրիչ գնդիկավոր՝ տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի: 30 հատ
- մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ՝ սև, համապատասխան կարծրությամբ: 10 հատ
- կարիչի (ստեպլեր) մետաղալարե կապեր (փոքր ասեղ): Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 10 մմ/6 մմ, նախատեսված է 10 համարի համար: 2 տուփ
- գրասենյակային ապակարիչ՝ N 10 ասեղներով կարված թղթերը քանդելու համար: 1 հատ
- կավիճ՝ աղացած, պոլիէթիլենային փաթեթով, սպիտակ գույնի: 2 տուփ

****** Վերոհիշյալ մրցույթն անցկացվում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 06.02.2017թ. N 40-Ա/1 հրամանով հաստատված ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» 2017 թվականի մրցույթի կանոնակարգի պահանջների համաձայն:

Ծառայության մատուցման ժամկետը	
սկիզբը	ավարտը
22.05.2017 թ.	30.07.2017 թ.

*Պարտադիր պայման է գույքի չօգտագործված լինելը.

** 1-ին և 2-րդ փուլերում անհրաժեշտ գույքը (պարգևատրման) Կատարողը հասցնում է ՀՀ մարզպետարանների, Երևան քաղաքի և ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմերի գտնվելու վայրեր, 3-րդ փուլի գույքը՝ (պարգևատրման) ք. Ծաղկաձոր (ժամկետները համաձայնեցվում են Պատվիրատուի հետ).

*** Եզրափակիչ փուլին միջոցառման անցկացման համար անհրաժեշտ գույքը Կատարողը հասցնում է մրցավայր, Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական և մարզադաշտի ձևավորման աշխատանքները, իսկ միջոցառման ավարտից անմիջապես հետո գույքը հասցնում է պահեստավորման վայր:

**** Կատարողը բոլոր փուլերի համար անհրաժեշտ մարզագույքը, նվերները հասցնում է մրցավայր կազմելով մարզագույքի բաշխման ցուցակներ, որոնք հետագայում ընդունման-հանձնման ակտի անբաժանելի մասն են կազմում:

**** *Բոլոր աշխատանքները համաձայնեցնել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության հետ:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	« Իմպերիում » ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան 9	ք.Երևան, ԱՐԱԲԿԻՐ Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ 112 7
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«Ինեկոբանկ»ՓԲԸ
Հ/Հ 900011059095	Հ/Հ 20506220660861001
ՀՎՀՀ-02586282	ՀՎՀՀ 00135548
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝ Գ.Հովհաննիսյան
_____ Վ. Էլոյան	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

ՍԿ-ՊՕԾՁԲ - 17/10-128-2017 2017թ. Մարտի 30

Հավելված 4
-ին կնքված
համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Անդ. Հազ.ՀՀ դրամ

N	Ձեռք բերվող ապրանքների, աշխատանքի, ծառայության անվանումը	Ընդամենը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2017 թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում											
			1-ին եռամսյակ			2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ		
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
	1	3 = (4:15)	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	«Լավագույն մարզական բնակիչ» մրցույթի անցկացման ծառայությունների ձեռքբերում					8357.00	8357.00	8357.00	13700.00	13700.00	13700.00	13700.00	13700.00	13700.00
	Ընդամենը	0.00	0.00	0.00	0.00	8357.00	8357.00	8357.00	13700.00	13700.00	13700.00	13700.00	13700.00	13700.00

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

ք. Երևան, Աբովյան 9

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Հ/Հ 900011059095

ՀՎՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար ____________ Վ. Էլոյան

(ստորագրություն)

Կ.Տ.

« Իմպերիալ » ՍՊԸ

ք.Երևան, ԱՐԱԲԿԻՐ Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ 112 7

«Ինեկոբանկ»ՓԲԸ

Հ/Հ 2050622060861001

ՀՎՀՀ 00135540

Տնօրեն ____________

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
<< >> ----------2017 թ. կնքված
N ---------- գնման պայմանագրի

ԿԱՏԱՐՈՂ
« Իմպերիում » ՍՊԸ
ք.Երևան, ԱՐԱԲԿԻՐ ԱԱՎԵՏԻՍՅԱՆ 112 7
«Ինեկոբանկ»ՓԲԸ
Հ/Հ 2050622060861001
ՀՎՀՀ 00135548

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ սպորտի և երիտասարդության
հարցերի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Աբովյան 9
Հ/Հ 900011059095
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02586282

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2017 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ----------
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2017 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Կատարողը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2017 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1								
2								

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
<<_____>> _____ 2017 թ. կնքված
N գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2017 թ. ------- -ին կնքված N ---------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2017թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն